ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 023 .-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 6-197

«10» 12 2018թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 3-ին կայացած թիվ 5 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 10 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

40.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

41.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

42-Ն.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ, 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

43.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ՝ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

44.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

45.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

46-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

47.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀԱ-ՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

48.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹԻՎ 01-63 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

49.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 40

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 3-ի, թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ Դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Զանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 41

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 37-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի համայնքներում 2018թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունը կից հավելվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Քննարկել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում 2018թվականի երր րդ եռամսյակի ընթացքում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունը՝ կից հավելվածներով, քննության առնել հայտնաբերված խախտումները և ներկայացված նախագծերը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Զանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 42-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ, 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի վարչական տարածքում՝ 2019թվականի համար, գործող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | 4կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Եղիգարյան | | | |
| Թ. Զանգիրյան | | | |
| Ս. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան
համայնքի ավագանու 2018թվականի
դեկտեմբերի 3-ի թիվ 5 հերթական նիստի
թիվ 42-Ն որոշում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ՝ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա.հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2)համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝

շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3)համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև չորս հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ:
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ:

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև երեք հազար դրամ:
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ:
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ:

5)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

6)ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ.սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

7)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

8)Օրացույցային տարվա համար ավագանու սահմանած տեղական տուրքի դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասնհինգ հազար դրամ:

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

3)համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

4)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ դրամ

5)համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար, աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

6)համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

7)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում գործող իրավաբանական անձանց կողմից վճարվող աղբահանության դրույքաչափը սահմանել՝

ա.Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1քառ. մետրի համար 20 դրամ.

բ.արտ սդրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1քառ. մետրի համար 4 դրամ.

գ.կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1քառ. մետրի համար 2 դրամ:

դ.իրավաբանական անձանց կողմից իրականացվող աղբահանության համար, սահմանվում է՝ 1քառ. մետրի դիմաց՝ 25 /քսանհինգ/ դրամ:

8)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար, մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար /մեկ հազար/ դրամ փոխհատուցման վճար:

9)Օրացուցային տարվա համար ավագանու սահմանված տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 023 -6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 43

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել՝ 225 000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ դրամը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Զանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱ-ՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ Օդեմ 0 ձեռնպահ

Ղ. Եղիգարյան
Թ. Ջանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2018թվականի դեկտեմբերի 3-ի
թիվ 5 հերթական նիստի, թիվ 44 որոշում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2018թվականի օգոստոսի 27-ի
թիվ 4 հերթական նիստի, թիվ 32 որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատա'իցների թվաքանակը` 9
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 225,0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 157,0 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 169,0 |
| 4 | Առաջատար մասնագետ | 3 | 152,0 |
| 5 | I կարգի մասնագետ | 2 | 134,0 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 6 | Վարորդ | 1 | 98,0 |
| | Ընդամենը | 9 | 1373,0 |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի «Մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

Ամագանու անդամներ 4 կողմ Օղեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Զանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2018թվականի դեկտեմբերի 3-ի
թիվ 5 հերթական նիստի, թիվ 45 որոշում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2018թվականի օգոստոսի 27-ի
թիվ 4 հերթական նիստի, թիվ 32 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
«ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 5
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ |
|---|---|---|---|
| 1 | վարիչ | 1 | 105.2 |
| 2 | գրադարանավար | 1 | 84.4 |
| 3 | գործավար-օպերատոր | 1 | 94.5 |
| 4 | պահակ | 1 | 78.0 |
| 5 | հավաքարար | 1 | 76.0 |
| Ընդամենը՝ | | 5 | 438.1 |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվականի թիվ 46-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 56-ի վեցերորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2019 թվականի բյուջեն.

Եկամուտների գծով՝ 33 781.2 հազար դրամ

Ծախսերի գծով՝ 33 781.2 հազար դրամ

Դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը՝/պակասորդը/ համաձայն հատված 4-ի:
6.Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8.Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի

2-րդ կետը, թույլատրել՝ 2019թվականի բյուջեով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները մինչև հայտարարված նպատակային մրցույթների արդյունքում պայմանագրերի կնքումը, իրականացնել մեկ անձից գնման եղանակով:

9.Թույլատրել՝ համայնքի ղեկավարին 2019թվականի բյուջեի կատարման ընթացքում գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածներում վերաբաշխումներ կատարելու համար սահմանել՝ 50% չափաքանակ:

10.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ 4 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան

Թ. Զանգիրյան

Ա. Ասատրյան

Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3

գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 47

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀԱ-ՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 13-ի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Կատարել փոփոխություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի «Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում» ընդգրկել ավագանու անդամ՝ Հայկ Էդիկի Եղիգարյանին, Հայկազ Այսերի Ասատրյանի փոխարեն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ Դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Ջանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹԻՎ 01-63 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի և «Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի հետ, կնքված թիվ 01-63 պայմանագիրը՝ համաձայն հավելվածի:
2.Մատուցվող ծառայությունների համար հատկացնել՝ 660 000 /վեց հարյուր վաթսուն հազար/ դրամ:
3.Հաստատել՝ համայնքի սանիտարական մաքրման սխեմայի նախագիծը համաձայն հավելվածի:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Եդիգարյան
Թ. Զանգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 01-63

## ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ

«01» 01 2019թ.

ք. էջմիածին

էջմիածին համայնքի «Բնակարանային կոմունալ վարչության» բյուջետային հիմնարկը, /հիմք ընդունելով էջմիածին համայնքի ավագանու 29.11.2017թ. թիվ -74-Ն որոշումը/, ի դեմս վարչության պետ՝ Մ. Դիլանյանի /հասցեն՝ ք. էջմիածին Մ.Մաշտոց 0 շենք/,որը գործում է ըստ Կանոնադրության, այսուհետ՝ «Կատարող» մի կողմից և էջմիածին համայնքի [illegible] ի դեմս

/օբյեկտի անվանումը/

[illegible] հետագայում, «Պատվիրատու», մյուս կողմից

անուն, ազգանուն, հայրանուն

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 «Պատվիրատուն» հանձնարարում է, իսկ «Կատարողը» պարտավորվում է իր փոխադրական միջոցներով տեղափոխել «Պատվիրատուի» կենցաղային աղբը և արտադրական թափոնները:

1.2 «Պատվիրատուն» պարտավորվում է մատուցված ծառայության դիմաց «Կատարողին» վճարել մեկ խորանարդ մետր աղբահանության համար ամսական 700 /Յոթ հարյուր / դրամի չափով վճար:

1.3 Սույն պայմանագրի գինը կազմում է տարեկան 660 000 դրամ / [illegible] /:Ամսական վճարը կազմում է 700 դրամ X 78.6 խմ ≈ 55 000 դրամ:

### 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

**2.1 «Կատարողը» պարտավոր է՝**

ա/ կենցաղային աղբի և արտադրական թափոնների տեղափոխման աշխատանքները կատարել «Պատվիրատուի» հետ համաձայնեցրած գրաֆիկով՝ շաբաթական 3 անգամ,

բ/ աշխատանքները կատարել իր միջոցներով և աշխատուժով,

գ/ աղբի տեղափոխման աշխատանքները կատարել ժամանակին,

դ/ աղբահանության համար սահմանված վճարի փոփոխության դեպքում 15 օր առաջ զանգվածային լրատվության միջոցներով տեղեկացնել «Պատվիրատուին»:

**2.2 «Պատվիրատուն» պարտավոր է՝**

ա/«Կատարողի» մատուցված ծառայության դիմաց վճարել սույն պայմանագրի 1.3-րդ կետում նշված գնին համապատասխան,

բ/ մատուցված ծառայության դիմաց ամսական վճարումը կատարել մինչև հաջորդող ամսվա 10-

գ/ յուրաքանչյուր ամիս վճարել 55 000 դրամ՝ կանխիկ մուծման կամ բանկային փոխանցման միջոցով՝ «Կատարողի» 900325151620 հաշվին:

**2.3 «Պատվիրատուն» իրավունք ունի՝**

«Կատարողի» կողմից աղբահանությունը չկատարելու դեպքում չվճարել հաշվետու ժամանակահատվածի աղբահանության վճարը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով «Կատարողին» :

*2.4 «Կատարողը» իրավունք ունի*

ա/ «Պատվիրատուի» կողմից վճարումները ժամանակին չկատարելու դեպքում դադարեցնել աղբահանումը և այն վերսկսել վճարումից հետո:

## *3.<<Պատասխանատվություն>> վճարը չվճարելու դեպքում*

3.1<<Պատվիրատուն>> աղբահանության վճարի վճարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքնչյուր օրվա համար վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.072 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

## *4. Այլ պայմաններ*

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 01.01.2020թ

4.2. Սույն պայմանագրի որևէ կետի փոփոխություն կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.3 Կողմերից մեկի նախաձեռնությամբ պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու համար նախաձեռնող կողմը պարտավորվում է 3 օր առաջ գրավոր տեղյակ պահել մյուս կողմին:

4.4 Պ այմանագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից՝ մեկական օրինակ տրվում է կողմերին, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ԿԱՏԱՐՈՂ»**

Անվանումը- ԷՋՄԻԱԾՆԻ <<ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ >>

հասցեն - ք. Էջմիածին Մ.Մաշտոց 0

բանկը – Տեղ. գանձապետական բաժ.

Հ/Հ - 900325151620

ՀՎՀՀ - 04716461

հեռ. 5-36-63 /777

ՊԵՏ Մ.ԴԻԼԱՆՅԱՆ/

/ ստորագրություն /

Կ.Տ.

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**

Անվանումը- [illegible]

հասցեն - [illegible]

բանկը - [illegible]

Հ/Հ - 90032517019

ՀՎՀՀ - 0470356

հեռ. - 6-38-10

[illegible]

/ անուն, ազգանուն /

/ ստորագրություն /

Կ.Տ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի,
ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ, ԹԻՎ 48 ՈՐՈՇՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Կնքել պայմանագիր՝ «Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի հետ:

2.Կատարողին հանձնարարել՝ իր փոխադրամիջոցով տեղափոխել Մրգաստան համայնքում գոյա-ցած կենցաղային աղբը և շինարարական թափոնները:

3.Աղբահանությունը կատարել նախապես համաձայնեցված գրաֆիկով, շաբաթական 3 անգամ:

4.Աշխատանքները կատարել՝ իրենց միջոցներով և աշխատուժով:

5.Աղբի տեղափոխման աշխատանքները կատարել ժամանակին:

6.Նշված ծառայությունները կատարելու համար, պայմանագրի գին սահմանել՝ 660 000 /վեց հարյուր վաթսուն հազար/ դրամը:

7.Ամսեկան վճարը՝ 78.6խ/մ համար /աղբի զբաղեցրած տարածք/, 55 000 /հիսունհինգ հազար/ դրամ, յուրաքանչյուր քառ. մետրի համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

8.Կատարել վճարում՝ յուրաքանչյուր ամիս, բանկային փոխանցման եղանակով /համայնքի բյու-ջեի միջոցների հաշվին/:

9.Կնքել պայմանագիր համայնքում գործող իրավաբանական անձանց հետ, կենցաղային աղբի տեղափոխման համար կատարվող վճարների վերաբերյալ:

10.Ապահովել աղբահանության /յուրաքանչյուր շունչը 50 դրամ/, նախատեսված գումարների հավաքագրում համայնքի բնակիչներից:Այդ նպատակով նշված ծառայության կատարման գործընթացը դրվել է՝ համայնքային ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնող /3.1-3 ծածկագրով/ աշխատակցի վրա և ամրագրվել է նշված պաշտոնի անձնագրում:

11.Համայնքի տարածքում տեղադրել՝ աղբամաններ:

12.Կազմակերպել շաբաթօրյակներ՝ «Մաքուր համայնք» խորագրով:

13.Շաբաթօրյակին մասնակից դարձնել՝ համայնքի բնակիչներին և շահագրգիռ բոլոր կազմակերպություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան,Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 49

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Գայանե Հրանտի Հովսեփյանին մոր մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
2.Ֆլորա Ստեփանի Կարապետյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
3.Փառոսյա Գրիգորի Խաչանյանին դեղորայք ձեռ բերելու համար, հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:
4.Նվարդ Լյուդվիկի Միքաելյանին երկրորդ խմբի հաշմանդամ ամուսնուն բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:
5.Արման Արտաշեսի Կյուրեղյանին որդուն բուժման տանելու համար, հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:
6.Արման Արթուրի Չիբչյանին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱՖ» ՀԿ-ի «ԷՋՄԻԱԾՆԻ ԱՎՏՈԴՊՐՈՑ» ՍՊԸ-ում 2018թ. օգոստոսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը դասընթացներին մասնակցելու համար, հատկացնել՝ 10 000 /տաս հազար/ դրամ, որպես երթևեկության վճար:
7.Էդիկ Գուրգենի Պետրոսյանին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱՖ» ՀԿ-ի «ԷՋՄԻԱԾՆԻ ԱՎՏՈԴՊՐՈՑ» ՍՊԸ-ում 2018թ. օգոստոսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը դասընթացներին մասնակցելու համար, հատկացնել՝ 10 000 /տաս հազար/ դրամ, որպես երթևեկության վճար:
8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Ջւ նգիրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ.Մրգաստան